



ԱՐԱՄԻՆԵ ՇԱՄԻՐՅԱՆ

**ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ասյանի
դասարանի օպերատոր**

**ԳՈՐԾՈՒՆ ԶՂՋԱԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՈՐՊԵՍ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՔ ԵՎ ԳՐԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄՈՎԻՆ
ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՑ**



Գործուն գղջալու ինստիտուտն իր ձևակերպումն է ստացել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան երկրների օրենսդրություններում, որպես քրեական պատասխանատվությունից ազատող կամ քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: Այս ինստիտուտը տարբեր զարգացման փուլեր է անցել:

1961 թ.-ի ՀԽՍՀ քրեական օրենսգրքով՝ գործուն գղջալու ինստիտուտը որպես այդպիսին չէր նախատեսվում: ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածը (քրեական պատասխանատվությունից ազատելը՝ հանցավորին երաշխավորության հանձնելով) սահմանված էր որպես քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն միջոց, որի պայմաններից մեկն էլ այն էր, որ

հանցավորը պետք է անկեղծորեն զղջացած լիներ կատարված արարքի համար: Երաշխավորության հանձնելը հանցավոր, դատապարտելի վարքագիծ դրսևորած անձին վերադաստիարակելու ձևերից էր, որը նախատեսված էր քրեական օրենսգրքում: Այս կերպ ազատված անձը հանձնվում էր աշխատավորների որոշակի կոլեկտիվի կամ որոշակի հասարակական կազմակերպության՝ ուղղման ու վերադաստիարակման նպատակով:

Այնուհանդերձ, այս ինստիտուտի կիրառման համար անհրաժեշտ էին մի շարք հանգամանքներ:

1. Այն մարմիններն ու պաշտոնատար անձինք, որոնք օժտված էին նման երաշխավորության հանձնելու իրավասությամբ, խիստ սահմանափակ էին: Գրանք էին՝ դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը: Ընդդրում, վերջին երկուսը կարող էին երաշխավորությամբ հանձնել միայն դատախազության համաձայնությամբ:

2. Սահմանված էր այն սուբյեկտների ցանկը, ովքեր կարող էին նման միջնորդությամբ դիմել: Որպես այդպիսին կարող էին հանդես գալ այն կոլեկտիվներն ու կազմակերպությունները, որոնցում աշխատել, սովորել կամ այլ գործունեություն էր ծավալել հանցավորը մինչև հանցագործություն կատարելը:

3. Այն հանգամանքները, որոնք փաստական և իրավաբանական հիմքեր էին տալիս հանցագործություն կատարած անձին երաշխավորությամբ հանձնելու, ընդհանուր գծերով նախատեսված էին ՀԽՍՀ քրեական



օրենսգրքի 48-րդ հոդվածում և քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ, 206-րդ, 230-րդ, 241-րդ և մի շարք այլ հոդվածներում: Դրանք էին՝ կատարված հանցանքը պետք է իրենից մեծ վտանգավորություն չներկայացնեն, հանցանք կատարած անձը հենց ինքը հանրության համար պետք է մեծ վտանգավորություն չներկայացնեն, երաշխավորության հանձնվող անձը պետք է նախկինում հանցագործության համար դատվածություն չունենար և երաշխավորությամբ չպետք է հանձնված լիներ, հանցանք կատարած անձը պետք է անկեղծորեն զղջացած լիներ կատարած արարքի համար¹:

Բացի այդ, թեև գործուն զղջալու ինստիտուտը հայտնի չէր ՀԽՍՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասին, սակայն գործուն զղջալու ինստիտուտի մասնավոր դրսևորում հանդիսացող որոշ խրախուսական նորմեր տեղ էին գտել օրենսգրքի Հատուկ մասում: Մասնավորապես՝ ՀԽՍՀ քրեական օրենսգրքի հոդված 229-ում սահմանված էր, որ թմրամիջոցները կամովին հանձնող անձն ազատվում էր հանձնված թմրամիջոցները ձեռք բերելու, ինչպես նաև դրանք պահելու, փոխադրելու և առաքելու համար քրեական պատասխանատվությունից: Նմանատիպ նորմ առկա էր նաև հոդված 232-ում՝ առանց համապատասխան թույլտվության իր մոտ պահած հրազենը, ռազմամթերքը կամ պայթուցիկ նյութերը կամովին հանձնելու դեպքում անձն ազատվում էր քրեական պատասխանատվությունից:

Գործող քրեական օրենսգրքը, սակայն, չի բավարարվել միայն օրենսգրքի Հատուկ մասում նման խրախուսական բնույթի դրույթների սահմանմամբ և Ընդհանուր մասի 72-րդ հոդվածում նախատեսել է քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն գործուն զղջալու դեպքում:

Այսպես, գործող քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է

հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Այս հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա դիսպոզիցիան պարունակում է քրեական պատասխանատվությունից ազատելու սուբյեկտիվ և օբյեկտիվ պայմաններ: Օբյեկտիվ պայմանը, որը փաստացի գոյություն ունի մինչև քրեական օրենսգրքով արգելված արարքի դրսևորումը՝ հանցագործության առաջին անգամ կատարումն է: Մյուս օբյեկտիվ պայմանը առաջ է գալիս հանցագործությունը կատարելիս. անհրաժեշտ է, որ հանցավորը չանցնի կոնկրետ նորմով սահմանված վնաս պատճառելու սահմանված չափը, այսինքն՝ կատարի ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք:

Սուբյեկտիվ պայմանների առաջացումը հնարավոր է միայն հանցագործության կատարումից հետո: Դրանք են՝ մեղայականով կամովին ներկայանալը, հանցագործության բացահայտմանը աջակցելը, պատճառված վնասի հատուցումը, կամ պատճառված վնասի հարթումը²:

Քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից ոչ թե ցանկացած զղջման, այլ օրենքով սահմանված դրական գործողությունների առկայությամբ զղջալու պայմաններում: Վերը նշված օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների ամբողջությունը կազմում է նորմատիվ հիմք՝ թույլատրելի բավարար պայմանների ամբողջություն, անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Այս ամենից հետևում է, որ նշված պայմաններից միայն մեկի կատարումը չի կարող հիմք հանդիսանալ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար, եթե նա օբյեկտիվորեն հնարավորություն ուներ կատարելու մյուսները, բայց չի կատարել: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ նշված կանոնը բացարձակ չէ և պետք չէ ընկնել ծայրահեղությունների մեջ և այս հոդվածն օգտագործել միայն այն ժամանակ, երբ առկա են բոլոր հանգամանքները միասին, քանի որ հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ



անձը մեղայականով ներկայանալու հնարավորություն չունենա: Օրինակ՝ երբ հանցանքը կատարելիս նրան անմիջապես բերման են ենթարկել կամ պատճառված վնասը հարթելու անհրաժեշտություն չի առաջացել:

Միաժամանակ հնարավոր է, որ անձի դրական, օրենքով խրախուսվող գործողությունները բավարար չլինեն նրան քրեական պատասխանատվությունից ազատելու համար, բայց հանդիսանան պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ: Օրինակ՝ անձը մեղայականով ներկայացել է, օժանդակել է հանցագործության բացահայտմանը, ամբողջությամբ հատուցել է պատճառված վնասը, բայց նախկինում կատարված հանցանքի համար դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ: Այսպես, պետք է նշել նաև, որ կախված հանգամանքներից՝ կարող են փոփոխվել անձին քրեական պատասխանատվությունից ազատելու սուբյեկտիվ պայմանները, մինչդեռ օբյեկտիվ պայմանները պետք է առկա լինեն միշտ:

Այսպիսով, քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական օրենսգրքով սահմանված պայմանները ոչ միայն բոլոր դեպքերում են համարվում անհրաժեշտ, այլ նաև հաճախ իրավակիրառողները դրանցով չեն բավարարվում և պահանջում են նաև այլ պայմանների առկայություն, որոնք նախատեսված չեն ոչ քրեական, ոչ էլ քրեական դատավարության օրենսգրքերով: Օրինակ՝ փորձում են հիմնավորել օրենսդրորեն չամրագրված այնպիսի պայմանների առկայությունը, ինչպիսիք են՝ անձի կողմից հանրային վտանգավորության կորուստը, հանցավորի ուղղման հնարավորությունն առանց պատժի նշանակման և այլն:

Այսպիսով, գործուն գղջալը կարող է հանգեցնել երկու իրավական հետևանքի՝ անձին լրիվ ազատել քրեական պատասխանատվությունից ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կամ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված խրախուսական նորմերի հիման վրա կամ էլ հանդես գալ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը սահմանում է, որ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից գործուն գղջալու դեպքում:

Առաջին պայմանը, որն առաջ է քաշվում օրենսդրի կողմից այն է, որ՝

ա/ կատարված արարքը պետք է լինի ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն: Հանցագործության ոչ մեծ կամ միջին ծանրության որոշումը ինչպես գիտենք իրականացվում է ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի հիման վրա՝ որպես կողմնորոշիչ ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի առավելագույն չափը:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում իրավակիրառողներն օգտագործում են «մեծ հանրային վտանգավորություն» (ընդորում ոչ մեծ հանրային վտանգավորությունը վերաբերում է թե արարքին. քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման մեջ³ քննիչը նշել է, որ անձը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց, թե անձի հանրային վտանգավորությանը. քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման մեջ⁴ քննիչը նշում է, որ անձի արարքը այլևս հանրային վտանգավորություն չի ներկայացնում): Նմանատիպ նախադասությունների օգտագործումը իրավակիրառողի ակտերի մեջ, մեր կարծիքով, անթույլատրելի է, քանի որ անհրաժեշտ է, որ անձի գործողությունները բավարարեն քր. օր.-ի 72-րդ հոդվածի պայմաններին:

բ/ Հանցավորը պետք է առաջին անգամ հանցանք կատարած լինի:

Այսպես, այս պայմանի էությունը կայանում է նրանում, որ անձի կողմից նախկինում չպետք է հանցանք կատարված լինի: Քրեական իրավունքում առաջին անգամ հանցանք կատարած են համարվում այն անձինք, ովքեր կամ նախկինում երբևիցե հանցանք չեն կատարել, կամ կատարել են, սակայն ազատվել են քրեական պատասխանատվությունից,



ԼՂՀ դատական իշխանություն

կամ էլ դատապարտվել են նախկինում կատարած հանցանքի համար, սակայն դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարվել կամ հանվել է: Վերջին երկու դեպքերը, սակայն, տեսության և պրակտիկայի մեջ տարակարծությունների տեղիք են տվել. հեղինակների մի մասը կարծում է, որ մնացած դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառման առումով որևէ կասկած չի նկատվում⁵, մինչդեռ երկրորդ խմբի ներկայացուցիչները կարծում են, որ 72-րդ հոդվածի կիրառումը անթույլատրելի է, քանի որ անձը փաստացի առաջին անգամ չէ, որ հանցանք է կատարում և նրա նկատմամբ մնացած հատուկ ներողատուությունը արդարացված չէ և առաջարկում են օգտագործել ոչ թե «առաջին անգամ հանցանք կատարել» բառակապակցությունը, այլ «առաջին անգամ հանցանքի կատարման մեջ մեղադրվողի» բառակապակցությունը⁶:

Կարծում ենք, որ սրա հետ կապված՝ տեսության մեջ և պրակտիկայում տարաբնույթ դատողությունների տեղիք է տալիս նաև այն իրավիճակը, երբ անձը կատարում է մի քանի հանցագործություններ, որոնցից ոչ մեկի համար դեռևս չի դատապարտվել, այսինքն՝ փաստացի առկա է հանցագործությունների համակցություն:

Որոշ հեղինակներ կարծում են, որ անձը, որը միաժամանակ կատարել է մի քանի հանցագործություններ, չպետք է ազատվի քրեական պատասխանատվությունից⁷, մինչդեռ առկա է նաև բևեռայնորեն հակառակ դիրքորոշում ունեցող մասնագետների խումբ⁸, ովքեր նշում են, որ մի քանի հանցագործությունների կատարումը ոչ միշտ պետք է խոչընդոտ հանդիսանա ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառման համար:

Հարցին հիմնավորված մոտեցում դրսևորելու համար, կարծում ենք, որ պետք է ուշադրություն դարձնել առաջին հերթին համակցության տեսակներին՝ իդեալական և իրական: Իրական համակցության դեպքում անձը կատարում է երկու և ավելի հանցագործություններ առանձին գործողություններով կամ անգործություններով: Այս դեպքում անձի կողմից կատարված հանցագործությունների

միջև, որպես կանոն, անցնում է որոշակի ժամանակահատված, ինչը հնարավորություն է տալիս նրան վերահսկել իր արարքները և բարձրացնում է անձի հանրային վտանգավորությունը: Նման պարագայում գործում գոյալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը, ըստ էության, կհակասի օրենսդրական պահանջին, այն է՝ հանցանքը պետք է կատարված լինի առաջին անգամ:

Այլ է իրավիճակը իդեալական համակցության դեպքում. անձը կատարում է մեկ արարք, որը պարունակում է երկու տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված արարքներ: Օրինակ՝ անձը ներկայացնում է կեղծ փաստաթուղթ նպաստ ստանալու նպատակով: Նման պարագայում թեև առկա են երկու կամ ավելի հանցանքներ, սակայն դժվար է նրա կողմից կատարվածը դիտել որպես նախկինում հանցանք կատարած անձի կողմից հանցանքի կատարում: Սակայն, այստեղ ի հայտ է գալիս ևս մեկ խնդիր. անհրաժեշտ է արդյո՞ք, որ հանցավորը գործում գոյում դրսևորի իր կողմից կատարված բոլոր արարքների նկատմամբ: Կարծում ենք, որ այդ: Օրինակ՝ վերը բերված օրինակում, եթե մեղայականով ներկայանալու դեպքում անձը օժանդակի, թե փաստաթուղթը կեղծելու փաստի բացահայտմանը և թե խարդախության բացահայտմանը, ապա միայն այս դեպքում այստեղ կարելի է կիրառել գործում գոյալու ինստիտուտը:

Կարծում ենք, որ այս առնչությամբ, ՀՀ քրեական օրենսգրքում պետք է ավելացնել խրախուսական բնույթի նորմեր այն դեպքերի համար, երբ անձը ցուցմունք տալով մի հանցագործության մասին, գիտակցաբար բացահայտում է նաև իր կամ մեկ այլ անձի կողմից ավելի վաղ կատարված, քննչական մարմիններին անհայտ հանցագործությունը, ինչը կնպաստի հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը: Օրինակ՝ անձը ցուցմունք տալով իր կողմից կատարված մի հանցանքի մասին, իշխանություններին տեղեկատվություն է տալիս նաև իր կամ մեկ այլ անձի կողմից կատարված, իշխանություններին մինչ այդ անհայտ, այլ



հանցագործության մասին: Ակնհայտ է, որ նման վարքագիծը պետության կողմից պետք է խրախուսվի՝ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու կամ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնելու եղանակներով:

գ/հանցավորը պետք է մեղայականով կամովին ներկայանա.

Մեղայականով կամովին ներկայանալ է համարվում անձի՝ իր կամ այլ անձանց միջոցով գրավոր կամ բանավոր կերպով քրեական հետապնդման մարմին դիմելը, ընդորում, մինչև իր կամ իր կողմից կատարված հանցագործության փաստի՝ որպես հանցավոր արարքի սուբյեկտի բացահայտումը⁹: Սակայն, մեր կարծիքով, այստեղ շեշտը պետք է դրվի ոչ թե հանցագործության փաստի կամ սուբյեկտի հայտնի լինելու, այլ ներկայանալու բնույթի վրա, այն է՝ ոչ թե հարկադրված, այլ կամովին ներկայանալու փաստի վրա: Ընդորում, կարևոր չէ՝ նա հետախուզվում է, թե ոչ, որքան ժամանակ է անցել հանցանքի կատարումից հետո, որն է եղել ներկայանալու շարժառիթը:

Սակայն, եթե անձը գիտակցում է, որ իր տեղը հայտնի է և իրեն ձեռքակալելու են, այդ դեպքում մեղայականով ներկայանալը չի կարող համարվել կամովին: Կարծիք կա, որ մեղայականով ներկայանալու մասին խոսք չի կարող լինել, եթե անձը ներկայացել է մեղայականով և ներկայացրել է հանցանքի բոլոր հանգամանքները, սակայն հրաժարվում է իրեն մեղավոր ճանաչել իրեն առաջադրված բոլոր մեղադրանքներում, այսինքն՝ ընդունում է դրանց միայն մի մասը¹⁰:

Այս հարցի շուրջ, տեսության մեջ և պրակտիկայում ծավալված, վիճաբանություններին վերջ դնելու նպատակով Ռ.Դ. Գերագույն դատարանը. օրինակ՝ կայացրել է հետևյալ որոշումը¹¹: Այսպես, ըստ այդ որոշման՝ կամովին մեղայականով ներկայանալը ճանաչվում է որպես այդպիսին, եթե հանցավորը նույնիսկ լռում է իր կատարած հանցանքի որոշ մանրամասների մասին, իր մեղքը ընդունում է միայն մասնակի:

Որոշ հեղինակներ, խոսելով մեղայականով ներկայանալու մասին, նշում են, որ դրա

գլխավոր առանձնահատկությունը հանցավորի կողմից ինքնաբացահայտումն է և վնասակար հետևանքների ինքնակամ հարթումը, որը կկրճատի պետության կողմից հանցագործության բացահայտման ուղղությամբ ծախսվող ուժերն ու միջոցները¹²: Ընդորում, նրանք շեշտը դնում են ոչ թե զղջալու, այլ տնտեսապես շահավետության գործոնի վրա, ինչը տարակուսանքի տեղիք է տալիս, քանի որ դա, ըստ էության, հակասում է գործուն զղջալու ինստիտուտի իրավական նշանակությանը: Ի՞նչ իմաստ ունի սահմանել քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն տեսակ, եթե դա չի նպաստելու հանցագործությունների դեմ պայքարին:

«Չղջալ» նշանակում է մեղավոր զգալ, կարեկցել իր կատարած հակաիրավական արարքի համար: Նման զղջալը կարող է դրսևորվել մեղայականով ներկայանալով, հանցագործության բացահայտման քննությանն օժանդակելով, իր մեղավորության ընդունմամբ, չթաքցնելով այնպիսի փաստեր, որոնք կարող են էական նշանակություն ունենալ հանցագործության բացահայտման համար: Բնականաբար, առանց նշված գործողությունների «զղջալ» խիստ գնահատողական կատեգորիա է և անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ սահմանել, թե գործուն զղջալը ինչ կերպ կարող է դրսևորվել:

Պ.Վ.Ալյուշկինը, բացահայտելով գործուն զղջալու հոգեբանական ասպեկտը, գալիս է այն եզրահանգման, որ դա անձի ձգտումն է վերացնել հոգեբանական ընկճվածությունը, որը առաջացել է մեղքի զգացումով. այս ինստիտուտը միշտ ենթադրում է կատարվածի համար անկեղծ զղջում¹³: Այսինքն՝ գործուն զղջալը պետք է դրսևորվի կոնկրետ գործողություններով, բայց միաժամանակ անհրաժեշտ է անկեղծ զղջալու գործոնը:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս վարվել այն պարագայում, երբ անձը կատարում է բոլոր գործողությունները՝ ներկայանում է մեղայականով, օժանդակում է գործի քննությանը, հարթում է պատճառված վնասը, կամ այլ կերպ հարթում է վնասը, սակայն չի զղջում կատարածի համար (այս օրինակը, իհարկե, քիչ հավանական է): Մեր կարծիքով, զղջալը



զնահատողական կատեգորիա է և պետք է զնահատվի կոնկրետ գործողություններով և կապ չունի, անձն ինչ շարժառիթներով է արել այդ ամենը՝ վախի՞, մեղքի՞, թե՞ այլ մղումներից դրդված: Վախի շարժառիթի մասով պետք է նշել, որ խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ անձը գիտի, որ պետական մարմինները տեղյակ են հանցանքի մասին և նա միայն այդ ժամանակ է ներկայանում համապատասխան մարմիններին և հայտնում հանցանքի մասին, քանի որ այս դեպքում խոսք չի կարող լինել այդպիսի քայլի կամավորության մասին: Մրանով այս ինստիտուտը ավելի է նմանվում մեղադրյալի հետ գործարքի (plea bargain) հետ: Սակայն մյուս կողմից էլ պետք է հաշվի առնվի, որ գործուն գոյալու ինստիտուտն այս կերպ զնահատելով, բոլորովին չի վերականգնվում սոցիալական արդարությունը, փաստորեն, քրեական հետապնդման մարմինը հաշվի չառնելով զոչալու հոգեբանական ասպեկտը, գործուն զոչալու ինստիտուտը վերածում է զուտ հաշվարկային փոխհարաբերության, որը կարող է նպաստել տվյալ անձի կողմից կրկին հանցանք կատարելուն: Եվ միևնույն ժամանակ, եթե քրեական հետապնդում իրականացնող մարմինը ուղղորդվի անձի՝ հոգեբանորեն զոչալու հանգամանքով, ապա սա կդառնա սուբյեկտիվ զնահատողական կատեգորիա և բազում չարաշահումների տեղիք կտա:

դ/ Հանցավորը պիտք է օժանդակի հանցագործության բացահայտմանը.

Բացահայտել նշանակում է որևէ հանցանք, կամ դա կատարող անձին (անձանց) դարձնել ակնհայտ, հայտնի: Իսկ գործնականում ինչպե՞ս պետք է դրսևորվի հանցագործության բացահայտմանը նպաստելը: Հատկանշական է, որ օրենսդրության մեջ նաև օգտագործվում է «հանցագործության բացահայտմանը ակտիվ մասնակցություն» տերմինը: Այս դրույթը իր մեկնաբանությունն է ստացել ՌԴ Գերագույն դատարանի որոշման մեջ, ըստ որի բավարար չէ, որ հանցավորը ընդունի մեղքը, զոչա դրա համար և տեղեկացնի կատարվածի փաստական հանգամանքները, անհրաժեշտ է, որ անձը քննչական մարմիններին հայտնի տեղեկություն,

որը մինչ այդ նրանց հայտնի չէ. օրինակ՝ մատնանշի հանցագործության գործիքի գտնվելու վայրը, օժանդակի քննչական գործողությունների կատարմանը, ներկայացնի իրեն նաև ապացույցներ, մերկացնի հանցագործության այլ մասնակիցներին և այլն¹⁴: Այսինքն հանցագործության դեպքի հայտնաբերումը, դեպքի սուկ բացահայտումը բավարար չեն. անհրաժեշտ է նաև հանցագործության քննությանը օժանդակություն ցույց տալ:

ե/ Հանցագործությանը պարճառված վնասը պիտք է հարուցվի կամ այլ կերպ հարթվի

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը քրեական պատասխանատվությունից ազատելը կապում է ոչ թե ներքին, անկեղծ զոչման, այլ գործուն զոչալու հետ: Վնասի փոխհատուցումը կարելի է դիտել որպես հանցագործությանը պատճառված վնասի փոխհատուցման գլխավոր տեսակ: Սակայն կարելի է առանձնացնել հանցագործությանը պատճառված վնասի հարթման նաև այլ տեսակ՝ դա այլ միջոցներով հարթելն է:

Գործուն զոչալու այս պայմանը մի դեպքում կարող է պարտադիր լինել, մյուս դեպքում՝ ոչ: Բոլոր այն դեպքերում, երբ անձին պատճառվում է նյութական վնաս, պատճառված վնասի հատուցումը պարտադիր է, իսկ այլ կերպ պատճառված վնասի հարթումը հնարավոր է ինտելեկտուալ կամ այլ նյութական օգնություն ցույց տալով՝ ֆիզիկական, բարոյական կամ այլ վնասը հարթելու համար:

Պետք է նշել, որ պրակտիկայում, երբ անձը բռնվում է հանցանքի կատարման վայրում, հաճախ հետաքննիչները և քննիչները առաջ չեն քաշում նյութական վնասի հատուցման հարցը: Ասվածը հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ անձը բռնվում է դեպքի վայրում գողոնի առկայությամբ:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ անձին հասցված վնասը նյութական բնույթ չի կրում, ապա այս դեպքում հանցագործությանը պատճառված վնասի հարթումը առաջ է գալիս ոչ միայն այն դեպքում, երբ դա ուղղված է կոնկրետ անձի պատվի, արժանապատվության, այլ նաև ամբողջ հասարակու-



թյան, դրա անվտանգության և կայունության դեմ: Այդ իսկ պատճառով անթույլատրելի է քրեական գործերը կարճել այնպիսի արտահայտություններով, ինչպիսիք են՝ հանցագործությանը որևէ վնաս չի պատճառվել, օրինակ՝ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածով նախատեսված հանցանքով՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ ապօրինի տարածելը¹⁵:

Եթե անձին պատճառվել է նյութական կամ բարոյական վնաս՝ կապված նրա անձնական ոչ գույքային իրավունքների հետ և դրա որոշումը բարոյություններ է առաջացնում նախաքննության մարմնի համար, ապա անհրաժեշտ է դա որոշել դատական քննությանը:

Վնասի հատուցումը պետք է համապատասխան լինի պատճառված վնասին. չի կարելի անտեսել վնասի հատուցումը և քրեական գործը կարճել այնպիսի արտահայտությամբ, ինչպիսին է «տուժողին պատճառված վնասը հանդիսանում է չնչին», իսկ քրեական գործը կարճելու որոշումը պետք է պարունակի հստակ տեղեկություններ, թե ինչպիսի վնաս է պատճառվել, արդյոք այն հատուցվել է ամբողջությամբ, անձին պատճառված բարոյական վնասը հարթվել է, թե՞ ոչ, եթե հարթվել է, ապա կոնկրետ ինչ գործողություններով է հարթվել:

Այս ամենի հետ մեկտեղ հանցագործությանը պատճառված վնասի հարթման մեջ կարելի է մտցնել նաև այն միջոցների փոխհատուցման խնդիրը, որոնք օգտագործել է պետությունը հանցագործության քննության համար:

զ/ այլ պայմաններ.

Քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ պրակտիկ աշխատողների կողմից օգտագործվում են նաև այլ պայմաններ, ինչպիսիք են անձի բնութագիրը բնակության, աշխատանքի, ուսման վայրից, նարկոլոգիական դիսպանսերում գրանցված լինելու հանգամանքը և այլն: Այս բոլոր տվյալները բնութագրում են հանցավորի անձը, ինչը հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե արդյո՞ք տվյալ անձին քրեական պատասխանատվությունից

ազատելը գործուն գոյալու հիմքով նպատակահարմար է, թե՞ ոչ:

Միայն ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված դրական պայմանների առկայությամբ է քրեական դատավարության 37-րդ հոդվածի 1-ին մասը հնարավորություն տալիս դատարանին, դատախազին, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչին, հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է տալիս նույն մարմիններին չհարուցել քրեական գործ՝ վերը նշված պայմաններով:

Քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է՝ այլ հանցանք կատարած անձը, սույն հոդվածի առաջին մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում, քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում:

Այս հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից նաև ծանր և առանձնապես ծանր հանցանքների դեպքում՝ 72-րդ հոդվածի առաջին մասում նախատեսված պայմանների առկայությամբ և Հատուկ մասի նորմերով հատկապես նախատեսված դեպքերում: Այսպիսով, քրեական օրենսգիրքը, բացի քրեական պատասխանատվությունից ազատելու ընդհանուր հիմքերից, նախատեսում է նաև հատուկ հիմքեր (օրինակ՝ նախատեսվող ահաբեկչական ակտի մասին տեղեկացնելը):

Գրականության մեջ միասնական կարծիք չկա, թե արդյո՞ք խրախուսական բնույթի նորմերը գործուն գոյալու տարատեսակ են, թե՞ իրենցից ինքնուրույն ինստիտուտ են ներկայացնում: Տ.Յու.Պողոսյանը այն համարում է գործուն գոյալու ինստիտուտի բաղկացուցիչ մասը¹⁶, իսկ Ա.Բ.Ռարոզը համարում է, որ պատասխանատվությունից ազատելու հատուկ միջոցների և գործուն գոյալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանները նույնական չեն¹⁷:

Մեր կարծիքով, տարբերություններ կան



ԼՂՀ դատական իշխանություն

գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու ընդհանուր և հատուկ պայմանների միջև, սակայն դրանք ընդհանուր կանոնից բացառություններ են և հիմք չեն տալիս եզրակացնել, որ քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ միջոցները իրենցից ինքնուրույն ինստիտուտ են ներկայացնում:

Ա.Ի.Ռարոզը քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ տեսակները դասակարգում է չորս խմբի¹⁸.

1-ին խմբում ներառված են քրեական պատասխանատվությունից ազատելու այն միջոցները, որոնց համար անհրաժեշտ է ուղղակի փաստացի դադարեցնել այն հանցանքների կատարումը, որոնք իրավաբանորեն արդեն ավարտված են (հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելը, ապօրինի կերպով զենք, պայթուցիկ նյութեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը, ապօրինի կերպով զենք պատրաստելը):

2-րդ խմբում ներառված են քրեական պատասխանատվությունից ազատելու այն միջոցները, որոնցում դրսևորվում են ակտիվ գործողություններ, որոնք վկայում են հանցավոր վարքագիծ դրսևորած անձի գղջալու գործուն բնույթի մասին (առևանգում, պատանդ վերցնել, սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը):

3-րդ խմբում ներառված են քրեական պատասխանատվությունից ազատելու այն միջոցները, որոնցում քրեական պատասխանատվությունից ազատում հնարավոր է միայն այն դեպքերում, երբ անձը ակտիվ գործողություններով կանխել է հանցագործությանը պատճառված վնասը կամ հետագա վնասարար հետևանքները (ահաբեկչական ակտ, պետական դավաճանություն):

4-րդ խմբում ներառված են քրեական պատասխանատվությունից ազատելու այն միջոցները, որոնք կարող են կատարվել հատուկ հանգամանքներում, այնպիսի պայմաններում, որոնք անձին ստիպում են դիմել նման

քայլի, օրինակ, նման վիճակ հնարավոր է կաշառք տալու պարագայում:

Տ.Յու.Պողոսյանը պատասխանատվությունից ազատելու հատուկ միջոցները դասակարգում է 3 խմբի.

1. անձի գործուն գղջալը, որը վկայում է առանց պատիժը կրելու անձի ուղմման հնարավորության մասին:

2. այն դեպքերը, երբ փաստացի կատարածի ու դրա հնարավոր ավելի վատթար հետևանքների միջև կա ժամկետ, որի ընթացքում անձը կարող է ակտիվ գործողություններով փոխել իրադրությունը:

3. չկատարել այլ հողվածով որակվող արարք:

Խրախուսական բնույթի նորմեր առկա են ՀՀ, ՌԴ, Իսպանիայի, Բուլղարիայի և մի շարք այլ երկրների քրեական օրենսգրքերի Հատուկ մասի նորմերում: ՀՀ-ում, ՌԴ-ում, որպես կանոն, խոսվում է քրեական պատասխանատվությունից ազատելու, իսկ Իսպանիայում և Բուլղարիայում պատժից ազատելու մասին: Քրեական պատժից ազատելու տարբերակը թվում է ավելի ընդունելի, քանի որ այն կբերի գործուն գղջալու հիմքով անձին պատժից ազատելու կիրառմանը միայն դատարանի կողմից, քանի որ ՀՀ-ում պատիժ կարող է նշանակել միայն դատարանը և կվերանա անմեղության կանխավարկածի սկզբունքի հետ գոյություն ունեցող հակասությունը՝ կապված քրեական գործը քննիչի կողմից կարճելու հետ:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հողվածի հինգերորդ մասում նշվում էր պատժից ազատելու մասին՝ չնայած այն հանգամանքին, որ մյուս խրախուսական նորմերում խոսք է գնում միայն քրեական պատասխանատվությունից ազատելու մասին: Սակայն 09.02.12 թվականի ՀՕ-18-Ն որոշմամբ քրեական պատժից ազատվելը փոխվեց քրեական պատասխանատվությունից ազատվելով: Ընդունելի է այն հանգամանքը, որ Իսպանիայում գործուն գղջալու հիմքով անձին պատժից ազատելու իրավունքը տրված է միայն դատարանին կամ տրիբունալին¹⁹:

ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հողվածի



4-րդ մասով նախատեսված է խրախուսական բնույթի նորմ, ըստ որի՝ ահաբեկչության նախապատրաստությանը մասնակցած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա, իշխանության մարմիններին հայտնելով կամ այլ միջոցներով, նպաստել է ահաբեկչության խափանմանը, և եթե նրա գործողությունները այլ հանցակազմ չեն պարունակում: Նույն հոդվածի 1-ին մասի ահաբեկչությունը դրսևորվում է պայթյուն, հրկիզում, զգալի գույքային վնաս պատճառելու, կամ հանրորեն վտանգավոր այլ հետևանքների իրական վտանգ ստեղծող գործողություններ կատարելով կամ նման գործողություններ կատարելու սպառնալիքով: Այսինքն այս հանցակազմը ձևական է և այս հանցագործության որակման համար բավարար է միայն վտանգ ստեղծող գործողությունների կատարումը:

Ահաբեկչության խափանումը անձի կողմից կարող է իրականացվել կամ իշխանության մարմիններին հայտնելով, կամ սեփական գործողություններով: Իշխանության մարմիններին կարելի է հաղորդել ցանկացած ձևով՝ գրավոր կամ բանավոր, անանուն կամ բացահայտ, կարևորը, որ հաղորդումը լինի հստակ: Հաղորդումը պետք է լինի ժամանակին, այսինքն իշխանությունները պետք է կարողանան կանխարգելել ահաբեկչական ակտի վտանգ ստեղծող գործողությունների իրականացումը: Որպես իշխանության մարմին կարող է դիտվել ցանկացած պետական մարմին, որը կարող է միջոցներ ձեռնարկել ահաբեկչության խափանման ուղղությամբ: Եթե անձի հայտնած տեղեկությունները չեն հանգեցնում ահաբեկչական ակտի խափանմանը, ապա նա չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, սակայն դա հաշվի կառնվի որպես պատիժը մեղմացնող հանգամանք:

Այլ միջոցներով ահաբեկչության խափանումը նշանակում է անձի կողմից այնպիսի գործողությունների կատարում, որոնք անհնարին են դարձնում ահաբեկչության իրականացումը: ՌԴ քրեական օրենսգրքի մեկնաբանությունների համաձայն, նման գործողություններ կարող են լինել պայթուցիկ նյութերի

վնասագերծումը, մյուս հանցակիցների նկատմամբ հոգեբանական կամ ֆիզիկական ներգործությունը, նախատեսվող ահաբեկչական ակտին պաշտոնատար անձանց «մասնակից» դարձնելը, հանցակիցներին ապատեղեկացնելը և այլն²⁰:

Ահաբեկչության ընթացքում այլ հանցանքներ կատարած անձը, վերը նշված պայմանների համաձայն, կազատվի պատասխանատվությունից միայն ահաբեկչության մասով: Մի քանի ահաբեկչական գործողությունների մասնակցած անձը ազատվում է այն ահաբեկչությունների մասով միայն, որոնք հաջողվել է կանխել:

ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի մյուս հոդվածը, որը նախատեսում է խրախուսական բնույթի նորմ, քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածն է, որը պատասխանատվություն է տալիս անհամաձայն պատանդ վերցնելու կամ պատանդ պահելու համար: Նույն հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ իր պահանջներից հրաժարված և պատանդին կամովին ազատ արձակած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողությունները այլ հանցակազմ չեն պարունակում: Այս նորմի նախատեսումը կարևոր նշանակություն ունի հետագայում պատանդ վերցրած անձի կողմից առավել վտանգավոր հանցագործության կատարումը խափանելու համար: Օրինակ՝ անձը կարող է սպանել պատանդին: «Եթե անձի արարքը չի պարունակում այլ հանցակազմ» արտահայտությունը այս դեպքում ունի լրացուցիչ պարզաբանման կարիք, քանի որ անձին պատանդ վերցնելը և պատանդ պահելը մշտապես զուգորդվում է անձին առևանգելով կամ ազատությունից ապօրինի զրկելով: Հարց է առաջանում, թե արդյոք պատանդին կամովին ազատ արձակած անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից պատանդ վերցնելու համար, սակայն մարդուն առևանգելու կամ ապօրինաբար ազատությունից զրկելու համար պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության:

Այսպես, մեր կարծիքով, նման մոտեցումն անիմաստ կդարձնի պատանդին ազատ արձակելու համար խրախուսական նորմի գոյու-



ԼՂՀ դատական իշխանություն

թյունը. եթե հանցավորը իմանա, որ միննույնն է, կենթարկվի պատասխանատվության, ապա հավանականությունը շատ փոքր է, որ նա հրաժարվի իր պահանջներից: Կարծում եմ, որ պատանդ վերցնելու համար քրեական պատասխանատվություն սահմանելիս, օրենսդիրն արդեն իսկ նկատի է ունեցել այն, որ հիշյալ հանցանքի կատարումը անհնարին է առանց ինքնուրույն հանցակազմ պարունակող երկու այլ արարքներից որևէ մեկի՝ մարդուն առևանգելու կամ անձին ապօրինաբար ազատությունից զրկելու կատարման, ուստի խրախուսական նորմում նախատեսել է նաև նշյալ հանցանքների համար քրեական պատասխանատվությունից ազատվելու հանգամանքը:

Խրախուսական բնույթի նորմ է սահմանում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածի (չենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի այլ միջոցների զավթումը) չորրորդ մասը՝ իր պահանջներից հրաժարված և զավթածը կամովին ազատ արձակված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողությունները այլ հանցակազմ չեն պարունակում: Այս խրախուսական նորմը լրացուցիչ պարզաբանման կարիք չունի, քանի որ, ըստ էության, քննարկվել է նախորդ երկու հոդվածները քննարկելիս:

Հաջորդ խրախուսական բնույթի նորմը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածի չորրորդ մասում, որը սահմանում է՝ իր կողմից հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դեկավարելու կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելու մասին պետական մարմիններին կամովին հայտնաբերելու և դրա գործունեության խափանմանը նպաստած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողությունները այլ հանցակազմ չեն պարունակում: Այս նորմը մեծ կարևորություն ունի հանցագործությունների դեմ պայքարում՝ հաշվի առնելով այն, որ հանցավոր համագործակցությունը ստեղծվում է տևական ժամանակով հանցավոր գործունեություն ծավալելու նպատակով և նրա անդամների միջև կապը կայուն է, ուստի և տվյալ հանցագործու-

թյան և դրա հետ կապված այլ հանցանքների բացահայտումը իրենից բարդ գործ է ներկայացնում: Ընդորոմ, քննարկվող խրախուսական բնույթի նորմի կիրառման համար անհրաժեշտ է, որ անձն իր հայտնած տվյալներով «նպաստի հանցագործության խափանմանը»:

Այս հասկացությունը կարող է լայն մեկնաբանվել իրավակիրառ մարմնի կողմից: Այսպես, հանցագործության խափանում ասելով, հասկանում ենք հանցավոր համագործակցության բոլոր անդամների մերկացումը, տվյալ հանցավոր համագործակցության տապալումը: Բացի այդ, անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար անհրաժեշտ է, որ հանցավորի գործողությունները այլ հանցակազմ չպարունակեն: Դժվար է սակայն պատկերացնել, որ հանցավոր համագործակցության անդամ հանդիսացող անձը հնարավորություն ունենա որևէ հանցագործության կատարումից ձեռնպահ մնալ: Այդ պատճառով, մեր կարծիքով, պետք է նախատեսվի նորմ, որ ավելի ծանր հանցագործության խափանմանը նպաստած անձը, որը ավելի ցածր հանրային վտանգավորություն ներկայացնող արարք է կատարել, ևս ազատվի քրեական պատասխանատվությունից, ինչն ավելի կմեծացնի խրախուսական նորմի գործողության արդյունավետությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) հիմնված մասը սահմանում է, որ նշված առարկաները կամովին հանձնած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից: Նշված առարկաների կամովին հանձնելը ենթադրում է նշված առարկաների հանձնում իր կամքով անկախ հանձնելու շարժառիթներից: Հանձնումը կարող է դրսևորվել ինչպես առձեռն հանձնելով, այնպես էլ իշխանության մարմիններին դրանց գտնվելու վայրի մասին հայտնելով: Հանձնումը չի կարող համարվել կամովին, եթե դրանք հայտնաբերվել են դրանց առգրավման կամ այլ քննչական գործողությունների ընթացքում²¹:



Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը իր հայեցողությամբ է հանձնում նշված առարկաները՝ գիտակցելով, որ իրեն բացահայտելու իրական սպառնալիք այդ պահին չկար: Եթե անձը զգում է, որ առկա է իրեն բացահայտելու իրական սպառնալիք և դրանից դրդված է իրականացնում հանձնումը, ապա այն չի կարող համարվել կամովին: Հանձնումը համարվում է կամովին, երբ դրա մասին հորդորում են իշխանությունները, սակայն ոչ թե ինչ-որ կոնկրետ անձի, այլ անձանց անորոշ շրջանակի: Անհրաժեշտ է նկատել նաև, որ կամովին հանձնելը ազատում է միայն նշված հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից և եթե տեղի է ունեցել նշված առարկաների հափշտակություն կամ շորթում, անձը չի ազատվի քրեական պատասխանատվությունից, սակայն դա հաշվի կառնվի որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: Անհրաժեշտ է անդրադառնալ այն դեպքին, երբ խուզարկություն է անցկացվում և անձին առաջարկում են հանձնել զենքը կամ այլ առարկա, նա ոչ մի կերպ չի արձագանքում հանձնելու առաջարկին և խուզարկության արդյունքում ոչինչ չի հայտնաբերվում, բայց հանցավորը խուզարկությունից հետո կամովին հանձնում է իր մոտ եղած առարկան: Նման պարագայում, մեր կարծիքով, ևս առկա է կամովին հանձնում, քանի որ խուզարկություն իրականացնողները չեն հայտնաբերել խուզարկվող առարկան և անձը կամովին է այն հանձնում: Այս դեպքերում ևս անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից:

ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի (ապօրինի կերպով զենք պատրաստելը) չորրորդ մասը նախատեսում է, որ նշված առարկաները կամովին հանձնած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողությունները այլ հանցակազմ չեն պարունակում: Այս հոդվածի մեկնաբանությունները նույնն են, ինչ և նախորդինը:

ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի (թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի, դրանց համարժեքների և պրեկուսորների ապօրինի շրջանառությունը իրացնելու նպա-

տակով) վեցերորդ մասում նախատեսված է խրախուսական նորմ, որի համաձայն՝ թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր կամովին հանձնած անձն ազատվում է թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու կամ դրանց ապօրինի իրացման համար նախատեսված քրեական պատասխանատվությունից:

ՌԴ քրեական օրենսգրքի 228-րդ հոդվածի ծանոթագրությունը այս առումով ավելի հստակ է և սահմանում է այն պայմանների ամբողջությունը, որը թույլ կտա անձին ազատվել քրեական պատասխանատվությունից, մասնավորապես պահանջվում է՝

1. Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի կամովին հանձնումը իշխանության մարմիններին:

2. դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների բացահայտմանը կամ խափանմանը ակտիվորեն նպաստելը՝ դրանք կատարած անձանց մերկացմանը օժանդակելով, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը հայտնաբերելով:

Այս դրույթների սահմանումը ՀՀ քրեական օրենսգրքում ևս կարևոր է հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության տեսանկյունից:

ՀՀ քրեական օրենսգրքի 275-րդ հոդվածի (խիստ ներգործող կամ թունավոր նյութերի ապօրինի շրջանառությունը դրանք իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը) չորրորդ մասում նախատեսված է, որ խիստ ներգործող կամ թունավոր նյութերը կամովին հանձնած անձն ազատվում է խիստ ներգործող կամ թունավոր նյութերի ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ դրանք ապօրինի իրացնելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից:

ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի (պետական դավաճանություն) երկրորդ մասում սահմանվում է, որ սույն հոդվածով, ինչպես նաև 302-րդ (լրտեսություն) հոդվածով նախատեսված հանցանքներ կատարած



անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա, իշխանության մարմիններին կամ մի կողմից հայտնելով կամ այլ ձևով, օժանդակել է հետագա վնասը կանխելուն և եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

Այստեղ խոսքը գնում է ոչ թե կամովին հրաժարվելու, այլ գործուն գղջալու մասին. այսինքն վնասը արդեն հասցված է և խրախուսական նորմն ուղղված է հետագա վնասը կանխարգելելուն: Այսպես, պետական գաղտնիքը հանձնելու դեպքում հետագա վնասի կանխումը կարող է իրականացվել այնպիսի գործողություններով, որոնց արդյունքում խափանվում է հասցեատիրոջ կողմից տեղեկություններ ստանալը: Բայց այդպիսի հնարավորություն հազվադեպ է լինում, ուստի անհրաժեշտություն է առաջանում հայտնել իշխանության մարմիններին: Եթե հանցավորը միայն հավաքել, պահել կամ հափշտակել է պետական գաղտնիք կազմող տեղեկությունները, ապա բավարար է միայն դրանք վերացնելը: Օտարերկրյա պետությանն այլ միջոցներով օգնություն ցույց տալը կամ թշնամու կողմն անցնելու դեպքում գործուն գղջալը կարող է դրսևորվել այնպիսի գործողությունների կատարմամբ, որոնք կհանգեցնեն հետագա վնասի խափանմանը. օրինակ՝ թշնամու կողմն անցածը կարող է ապատեղեկացնել թշնամուն: Իշխանություններին հայտնելը պետք է լինի կամավոր և ժամանակին, այսինքն, երբ իշխանություններն օբյեկտիվ հնարավորություն ունեն կանխելու հանցագործությունը: Հողվածում խոսվում է հետագա վնասը կանխելուն օժանդակելու մասին, այսինքն, եթե իշխանությունները, անձի կողմից տրամադրված տեղեկատվությունը ստանալու պարագայում, ունենալով օբյեկտիվ հնարավորություն, չեն կարողացել հասնել վնասի խափանմանը, ապա դա չի նշանակում, որ անձը ենթակա է պատասխանատվության:

Խրախուսական նորմեր նախատեսված են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի (պետական իշխանությունը յուրացնելը) 2-րդ մասում. հողվածում նշված գործողությունների մասին իշխանության մարմիններ-

րին հայտնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հայտնելու արդյունքում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հնարավոր է եղել կանխել դրանց իրականացումը: Հանցանքը ավարտված է համարվում պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, պետական իշխանությունը բռնությամբ պահելուն, ՀՀ սահմանադրական կարգը տապալելուն, ՀՀ տարածքային ամբողջականությունը բռնությամբ խախտելուն ուղղված գործողություններից մեկի կատարումով:

Խրախուսական բնույթի նորմեր նախատեսված են նաև ՀՀ քրեական օրենսգրքի հողվածներ 132.3-ի (շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը) 3-րդ, 312-ի (կաշառք տալը) 4-րդ, հողված 327-ի (այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայության վայրն ինքնակամ թողնելը) 5-րդ, հողված 338-ի (ցուցմունք տալուց հրաժարվելը) 3-րդ, հողված 355-ի (փախուստն ազատագրվման վայրից, կալանավորվածներին պահելու վայրերից կամ ձեռքակալվածներին պահելու վայրերից) 3-րդ, հողված 361-ի (գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը) 7-րդ, հողված 362-ի (դասալքությունը) 4-րդ մասերով:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ խրախուսական նորմեր պարունակող հողվածների մեծ մասում օգտագործվում է «ազատվում է» քրեական պատասխանատվությունից, այլ ոչ թե «կարող է ազատվել» տերմինը: Այսինքն, նշված պայմաններին համապատասխանող յուրաքանչյուր անձ օրենքի ուժով է ենթակա ազատման և դա չի թողնվում իրավասու մարմնի հայեցողությանը: Պետք է նշել, որ այս հանգամանքը շատ կարևոր է և նպաստում է վերոնշյալ նորմերի արդյունավետության բարձրացմանը:

Գործուն գղջալու և կամովին հրաժարվելու ինստիտուտների տարբերակումը ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն ունի, քանի որ, չնայած որոշ նմանությունների, այս երկու ինստիտուտներն էապես տարբերվում են միմյանցից: Այդ տարբերությունը ճիշտ հասկանալու համար



անհրաժեշտ է, նախ, անդրադառնալ հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտի հասկացությանը և նրա առանձնահատկություններին:

Այսպես, այս ինստիտուտի հիմնական առաքելությունը հանցագործությունների կանխումն է: Անձը, ով հայտնվել է քրեաիրավական անբարենպաստ դրության մեջ պետք է հնարավորություն ունենա որոշակի իրավաչափ գործողությունների միջոցով դուրս գալ այդ դրությունից:

Քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է՝ հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը:

Այսպիսով, կամովին հրաժարվելը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

Հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը դադարեցնելով.

Կամովին հրաժարվելու օբյեկտիվ կողմը բնութագրվում է գործողությունը կամ անգործությունը դադարեցնելով, որն ուղղված է հանցագործության կատարմանը: Նախապատրաստական փուլում սովորաբար դա դրսևորվում է պասիվ վարքագծով և հանցագործությունը ուղղակի հաջորդ փուլ չի հասնում: Սակայն հնարավոր են նաև ակտիվ գործողություններ այս փուլում. օրինակ՝ սպանության համար ձեռք բերված ատրճանակը ոչնչացվում կամ հանձնվում է իշխանություններին:

Հանցափորձի դեպքում կամովին հրաժարումը, որպես կանոն, հնարավոր է չավարտված հանցափորձի դեպքում, երբ անձն իրենից կախված ամեն ինչ դեռ չի կատարել հանցագործությունն ավարտելու համար: Հանցագործությունից հրաժարվելը հնարավոր է, քանի դեռ հանցագործության ավարտը կախված է կատարողից: Իսկ եթե անձը չի կարողանում հետևել դեպքի ընթացքին, հնարավորություն չունի ինքնուրույն դադարեցնել հանցագոր-

ծության ավարտը, ապա չի կարելի խոսել կամովին հրաժարվելու մասին: Այդ մասին է վկայում ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունը: Իսկ ինչ վերաբերում է ավարտված հանցափորձին, ապա, մեր կարծիքով, այն դեպքում, երբ անձը կատարում է իրենից կախված ամեն ինչ հանցագործության դադարեցման համար, սակայն բացասական հետևանքի վրա հասնելու համար պահանջվում է որոշակի ժամանակ և անձը փորձում է այդ ժամանակահատվածում ակտիվ գործողություններով կամ անգործությամբ կանխել բացասական հետևանքների վրա հասնելը, բայց դա նրան չի հաջողվում, ապա այս դեպքում կամովին հրաժարում առկա չէ, սա կարող է դիտվել, որպես մեղմացուցիչ հանգամանք, իսկ այն դեպքում, երբ ավարտված հանցափորձի դեպքում անձին այնուամենայնիվ հաջողվում է կանխել բացասական հետևանքների վրա հասնելը, ապա դա պետք է դիտվի որպես կամովին հրաժարում և այս կապակցությամբ օրենսգրքի համապատասխան հոդվածում պետք է փոփոխություն մտցվի:

Այսպես, կամովին հրաժարվելու հատկանիշներից մեկն էլ հանցագործությունից վերջնականապես հրաժարվելն է. անձը պետք է գիտակցի, որ դադարեցնելով գործողությունը, նա վերջնականապես հրաժարվում է հանցանքը մինչև վերջ հասցնելուց: Այս տեսանկյունից քննարկենք երկու իրավիճակ, որոնց պայմաններում հանցանքից վերջնականապես հրաժարվելը կարող է տարակարծություններ առաջացնել: Մոր կողմից նորածին երեխային չկերակրելը սպանելու նպատակով պահանջում է որոշակի ժամանակ. հնարավոր է, որ մայրը խղճավով մեկ անգամ կերակրի երեխային, բայց դա չի նշանակում, որ նա վերջնականապես է հրաժարվել իր հանցավոր մտադրությունից, և անձը կրակում է տուժողի վրա, սակայն մահը վրա չի հասնում ատրճանակի անսարքության պատճառով: Այստեղ ևս ոչինչ չի վկայում հանցագործությունից հրաժարվելու մասին, որովհետև հնարավոր է գործողությունների կրկնություն:

Այսպիսով, հանցագործությունից վերջնականապես հրաժարվելը ևս համարվում է



ԼՂՀ դատական իշխանություն

կամովին հրաժարման պարտադիր հատկանիշ: Հանցավորը պետք է գիտակցի հանցագործությունից վերջնականապես հրաժարվելու գործունը, իսկ եթե անձը դադարեցնում է գործողությունները, հետագայում ավելի նպաստավոր պայմաններում դրանք իրագործելու համար, ապա կամովին հրաժարվելու մասին խոսք չի կարող լինել: Ընդ որում, այս պայմանը նախատեսված չէ մեր օրենսդրությամբ, ինչն անթույլատրելի է: Ի տարբերություն մեր օրենսգրքի, ՌԴ- քրեական օրենսգրքի 31-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է՝ անձը հանցագործության համար ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա կամովին և վերջնականապես հրաժարվել է այդ հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց:

Հաջորդ հատկանիշը հանցագործության դադարեցման կամովինությունն է: Այսինքն, երբ անձը իր կամքով է դադարեցնում հանցագործության նախապատրաստությունը կամ հանցավորձը: Այսպես, նախապատրաստվելով կամ սկսելով օբյեկտիվ կողմի իրականացումը՝ անձը չի ավարտում հանցանքը ոչ թե դրա անհնարինության պատճառով, այլ սեփական կամքով: Հանցավորը կարող է հրաժարվել հանցանքի կատարումից նաև մերձավորների ազդեցության ներքո, սակայն ամեն դեպքում նման հրաժարումը պետք է լինի անձի ազատ կամահայտնության արդյունք: Հրաժարումը կարող է ունենալ ամենատարբեր շարժառիթներ: Անհրաժեշտ ենք համարում քննարկել նաև խոչընդոտների հարցը: Այսպես, խոչընդոտները կարող են լրիվ չափով գիտակցվել կամ չգիտակցվել հանցավորի կողմից, այն դեպքում, երբ անձը գիտակցում է խոչընդոտի անհաղթահարելիությունը և այդ պատճառով հրաժարվում է հանցանքը մինչև վերջ հասցնելուց, ապա այս դեպքում կամովին հրաժարում չկա: Կան նաև խոչընդոտներ, որոնք կարող են անհնարին դարձնել հանցանքի կատարումը: Այս դեպքում առաջանում են որոշակի բարդություններ:

Ա.Բ.Օռլովան այդ կապակցությամբ նշում է, որ հանցանքի կատարման պահին առաջացած խոչընդոտները կարող են ստիպել

անձին հրաժարվել հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց: Առաջացած խոչընդոտները կարող են նաև փաստացի անհնար դարձնել հանցանքի կատարումը. այս դեպքերում հանցանքը մինչև վերջ հասցնելուց հրաժարումը կլինի պարտադրված: Այն դեպքերում, երբ առաջացած խոչընդոտները օբյեկտիվորեն հնարավոր է հաղթահարել, բայց անձը հրաժարվում է հանցանքը մինչև վերջ հասցնելուց, առաջանում են բարդություններ արարքի որակման համար: Օռլովան առաջարկում է խոչընդոտները դասակարգել անհաղթահարելի, էական բարդեցնողի և բարդեցնողի: Անհաղթահարելիության մասին կարող է վկայել պատճառահետևանքային կապերի ուսումնասիրությունը. այս դեպքում գործողությունների դադարեցումը չի համարվի կամովին: Բարդեցնողի և էական բարդեցնողի դեպքում պետք է հաշվի առնվի հանցավորի սուբյեկտիվ հնարավորությունը՝ հանցանքը մինչև վերջ հասցնելու համար, պետք է ուսումնասիրել անձի անհատական տվյալները. այդ պայմաններից կախված էլ կարելի է եզրակացնել, թե արդյոք դադարեցումը կամովին էր, թե պարտադրված:

Հաջորդ պայմանը հանցագործությունը մինչև վերջ հասցնելու հնարավորության գիտակցումն է: Անձը պետք է գիտակցի, որ փաստացի հնարավորություն ունի ավարտելու հանցանքը. Ընդ որում, խոսքը գնում է սուբյեկտիվ ընկալման մասին ու եթե անձը օբյեկտիվ հնարավորություն է ունեցել ավարտելու հանցանքը, բայց չի գիտակցել դա, չի կարող դիտվել հանցանքը մինչև վերջ հասցնելու գիտակցում:

Այս հոդվածի երրորդ մասը սահմանում է՝ հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը կամովին հրաժարվելու դեպքում ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով, կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը: Եթե հանցագործությունը կանխել նրանց չի հաջողվում, ապա դա կդիտվի որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:



Քննարկվող երկու ինստիտուտների գլխավոր տարբերությունն այն է, որ կամովին հրաժարումն ընդհանրապես բացառում է քրեական պատասխանատվությունը, իսկ գործուն զղջալը կարող է ազատել քրեական պատասխանատվությունից կամ դիտվել որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Տարբերությունը կայանում է նաև նրանում, որ կամովին հրաժարումը հնարավոր է միայն մինչև հանցագործության ավարտը, իսկ գործուն զղջալը հնարավոր է միայն դրա կատարումից հետո:

Այս ինստիտուտները տարբերվում են նաև դրսևորման ձևերով: Այսպես, գործուն զղջալու դեպքում անձը կատարում է ակտիվ գործողություններ, իսկ կամովին հրաժարվելը, մանավանդ նախապատրաստական փուլում, հնարավոր է նաև անգործությամբ:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև նրան, որ Հատուկ մասի խրախուսական նորմերում օգտագործվում է «կամովին դադարեցնել» կամ «կամովին հայտնել» եզրույթները, ինչը չպետք է շփոթության մեջ գցի, քանի որ այդ դեպքերում խոսքը չի կարող գնալ կամովին հրաժարվելու մասին, քանզի դրանք վերաբերում են հանցագործության պատճառով առաջացած վտանգը կանխելուն, իսկ հիմնական հանցանքն այդ դեպքերում արդեն կատարված է:

1. Թովմասյան Ա.Թ. «Սովետական քրեական իրավունք», 2-րդ հ., ԵՐԵՎԱՆ, 1973թ. էջ 298:

2. ՌԴ դաշնային օրենքով սահմանված է ևս մեկ տարբերակիվ պայման՝ գործուն զղջալու պարագայում անչի կողմից հանրային վրանգավորության կորուստը: 1.08.12.2003 No 162-ֆզ Վ. II, 1, ժ. 79 չԿ ՔՓ.

3. Քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում, ք. Գլուսերի, 30 սեպտեմբերի 2010 թվական:

4. Քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում, ք. Վանաչոր, 2010 թ.-ի մայիս:

5. Чернова, Майя Борисовна, 2006 г. Санкт Петербург, dissercat.com.

6. Аликперов Х. Д., Освобождение от уголовной ответственности: уголовно правовые аспекты М. 1999, стр. 178.

7. Алюшкин П. В. Фактический состав освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием - стр 26, М, 1999.

8. Щерба П., Савкин А. В., Доказывание деятельного раскаяния подозреваемого (обвиняемого) на предварительном следствии, Методические рекомендации, М.: ВНИИ МВД РФ, 1994.

9. Аликперов Х. Д. Освобождение от уголовной ответственности: уголовно правовые аспекты М. 1999, стр. 158

10. Аликперов Х. Д. Освобождение от уголовной ответственности: уголовно правовые аспекты М. 1999, стр. 160

11. Обзор надзорной практики Судебной коллегии по уголовным делам Верховного Суда Российской Федерации за 2004 год, էջեր 30 -31:

12. Курбанова К., УК РФ и некоторые проблемы освобождения от уголовной ответственности, стр. 23.

13. Алюшкин П. В. Фактический состав освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием, М., 1999г, стр. 18, 19, 21.

14. Постановление Верховного Суда РФ от 14.01.2004 г. по делу Ветраева, 2004 г.

15. Уголовное дело номер 15704 СО Ленинского РОВД г. Саранска, 03.06.1997г.

16. Уголовное право. Часть Общая: учебное пособие: в 4 т./ С.Н.Сабанин, Т.Ю.Погосян и др.; отв. ред. И.Я.Козаченко; рец. В.И.Горобцов.-Екатеринбург: УрГЮА, т.4: Освобождение от уголовной ответственности и наказания: основания, виды и последствия. - 1995. стр. 136.

17. Уголовное право Российской Федерации, Особенная часть Рагог А. И., Москва, 2004 г., стр 26

18. Уголовное право Российской Федерации, Особенная часть Рагог А. И., Москва, 2004 г., стр 30

19. Law.edu.ru уголовный кодекс Испании, статья 376.

20. Комментарии к УК РФ, коллектив под руководством С. А. Разумова, Москва, 2005, статья 205.

21. Комментарии к УК РФ, коллектив под руководством С. А. Разумова, Москва, 2005, статья 246.